Հասմիկ Զավենի Բալեյան
Հասցե՝ ք. Երևան, Եղբայրության 10, բնակարան 27

Էլ. հասցե՝ hasmik.hay@mail.ru

ՀԵՌ.՝ +374 77 942 958

+374 41 942 958

«Ալիք Մեդիա»-ի լրագրող Հասմիկ Բալեյանից

ՀՀ ՏԿԵՆ նախարար Գնել Սանոսյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություն հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. ՀՀ-ում ինչպե՞ս են գոյանում *խմելու ջրի* ջրային ռեսուրսները:

2. Վերջին տարիներին ՀՀ ո՞ր մարզերում է գրանցվել խմելու ջրի սակավություն: Պետությունն ի՞նչ ջանքեր է գործադրում այս խնդրի լուծման համար:

3. Վերջին երեք տարվա ընթացքում խմելու ջուր ամբարելու նպատակով քանի՞ ջրամբար է կառուցվել ՀՀ-ում: Ի՞նչ խնդիրներ են լուծվել այդ ջրամբարների կառուցմամբ:

4. Այդյո՞ք ՀՀ-ում որոշակի պատճառներով կարող է առաջանալ խմելու ջրի կորուստ:

5. Արդյո՞ք վերջին տարիների ընթացքում հանրապետությունում փոխվել են խմելու ջրի ջրամատակարարման մաշված համակարգերը: Այդ համակարգերի համար ո՞ր կառույցն է վճարել. պետությո՞ւնը, թե՞ «Վեոլիա ջուր» ընկերությունը:

6. Հայաստանում կա՞ն բնակավայրեր, որտեղ խմելու ջուր չկա և բնակիչները հարևան բնակավայրերից են խմելու ջուր տանում: Եթե կան այդպիդի բնակավայրեր, խնդրում եմ նշել դրանք:

7. Խմելու ջրի հետ կապված խնդիրները լուծելու համար Հայաստանը միջազգային կառույցների հետ համագործակցո՞ւմ է: Եթե այո, ապա խնդրում եմ նշել այդ համագործակցություններից մի քանիսը: Ի՞նչ խնդիրներ են լուծվել այդ համագործակցությունների շնորհիվ: Արդյո՞ք ֆինանսական աջակցություն էլ է տրամադրվել:

8. Հայաստանում կա՞ն դպրոցներ և այլ կրթական հաստատությունները, որտեղ խմելու ջուր չկա, ուստի նաև սանիտարահիգիենիկ խնդիրներ են առաջանում։

9. Հայաստանում խմելու ջրի հետ կապված՝ սպասարկման ծառայությունները «Վեոլիա ջուր» ընկերությունից բացի՝ ո՞ր ընկերություններն են մատուցում։

10. Մարզերում և մայրաքաղաքում խմելու ջրի սակագինն արդյո՞ք նույնն է։ Խնդրում եմ նշել, թե Երևանում և մարզերում որքան է խմելու ջրի սակագինը։

11. Արդյո՞ք խմելու ջրի որակը, անվտանգությունը ստուգվում է պետական մարմինների կողմից։ Խմելու ջրի ակունքները մասնագետները ի՞նչ հաճախությամբ են հետազոտում։

Խնդրում եմ հարցման պատասխանն ուղարկել նաև վորդի ֆայլով, որպեսզի հնարավոր լինի տեքստը COPY անել և օգտագործել իմ հոդվածում։

Ցանկանալով խնայել պետության միջոցները՝ հայտնում եմ, որ հարցմանս փոստային տարբերակով պատասխանելու անհրաժեշտություն չկա։ Միայն էլեկտրոնային տարբերակով ուղարկելիք պատասխանը բավարար է։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում՝ բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ)։ Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետում։

Կանխավ շնորհակալ եմ։

Հասմիկ Բալեյան 29.03.2024 թ.